ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.05.2014 12:32

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անունից ջերմորեն շնորհավորում եմ ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի, Շուշի քաղաքի ազատագրման և Արցախի բանակի ստեղծման կապակցությամբ: Գաղտնիք չէ, որ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությունը ուղեկցվել է հարյուրհազարավոր զոհերով ու կորուստներով, բայց այն ապահովել է հայ ժողովրդի անվտանգությունը հետագա տասնամյակների համար: Եվ այս առումով մենք՝ հայերս պետք է հիշենք ու մեծարենք նրանց, ովքեր ժառանգեցին մեզ այդ անվտանգությունը և նորօրյա ազատամարտում մեր հայրերն ու եղբայրները սրբագրեցին իրենց արյամբ Արցախյան հերոսամարտում, որի ընթացքում անգնահատելի է Շուշի քաղաքի ազատագրումը ադրբեջանցիներից:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
Արա Ջոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })